

ԾՐԱԳԻՐ

2013 – 2017թթ. գիտության և տեխնոլոգիաների ոլորտում

համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության

գիտության պետական կոմիտեի

և

Ուկրաինայի գիտության, նորարարության և ինֆորմատիզացիայի հարցերով պետական

գործակալության միջև

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Ուկրաինայի գիտության, նորարարության և ինֆորմատիզացիայի հարցերով պետական գործակալությունը (այսուհետև՝ Պայմանավորվող կողմեր),

առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև 1997 թվականի հուլիսի 22 ին ստորագրված «Գիտատեխնիկական համագործակցության մասին» Համաձայնագրի դրույթներով,

նպատակ ունենալով զարգացնել և խրախուսել գիտության և տեխնոլոգիաների ոլորտում իրականացվող համագործակցությունը,

համաձայնեցին ստորագրել Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցության ծրագիրը (այսուհետև՝ ԳՏ Ծրագիր):

1. ԳՏ Ծրագրի իրականացումը կազմակերպում և համակարգում են ԳՏ Ծրագրի իրականացման հաստատությունները. հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) և ուկրաինական կողմից՝ Ուկրաինայի գիտության, նորարարության և ինֆորմատիզացիայի հարցերով պետական գործակալությունը (այսուհետև՝ Գործակալություն):

2. ԳՏ Ծրագրի համակարգման համար Պայմանավորվող կողմերը կազմավորում են գիտության և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հարցերով երկկողմ հանձնաժողով (այսուհետև՝ Հանձնաժողով):

ա) Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի ներկայացուցիչները: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի Հանձնաժողովի

համապատասխան մասը կազմավորվում է տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան: Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն իր մասի Հանձնաժողովի անդամներից նշանակում է Հանձնաժողովի իր մասի նախագահ (համանախագահ) և քարտուղար: Հանդիպումների միջև ընկած ժամանակահատվածում տեղեկատվության փոխանակումը իրականացվում է Հանձնաժողովի համանախագահների կամ քարտուղարների միջոցով: Հանձնաժողովի որոշումների համաձայնեցումը և ընդունումը կարող է իրականացվել կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով կամ Պայմանավորվող կողմերի Հանձնաժողովի երկու մասերի միջև որոշումների փոխանակման փոստային նամակագրության միջոցով: Համանախագահները կազմակերպում են Հանձնաժողովի իրենց մասի աշխատանքը: Քարտուղարները ապահովում են Հանձնաժողովի իրենց մասի ընթացիկ աշխատանքները և պատրաստում են Հանձնաժողովի նիստերի համար անհրաժեշտ նյութերը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ընդհանուր փոխզիջմամբ:

բ) Հանձնաժողովը հաստատում է.

- գիտության և տեխնոլոգիաների ոլորտում կրկնող համագործակցության առաջնային ուղղությունները,

- կրկնող գիտահետազոտական նախագծերի (այսուհետև՝ նախագծեր) ընտրության և գնահատման չափանիշները,

- հայտարարվող մրցույթների ժամկետները,

- նախագծերի ֆինանսավորման կարգը,

- ֆինանսավորվող նախագծերի, իրականացվող գործունեության ձևերը:

գ) Հանձնաժողովն իր իրավասությունների սահմաններում.

- ապահովում է ԳՏ Ծրագրի իրականացման համար հարմարավետ պայմաններ,

- ուսումնասիրում է ԳՏ Ծրագրի և իրականացվող նախագծերի արդյունքները:

դ) Հանձնաժողովի նիստերը կազմակերպում է Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը՝ հերթականությամբ: Հանձնաժողովի նիստերի կազմակերպման, փորձագետների փոխանակման ծախսերը և անհրաժեշտության դեպքում թարգմանիչների ծառայությունների դիմաց վարձատրությունն իր վրա է վերցնում ընդունող Կողմը: Ուղարկող կողմը վճարում է Հանձնաժողովի անդամների ճանապարհածախսը, ապահովագրության և կեցության ծախսերն ընդունող Կողմի պետության տարածքում: Հանձնաժողովի նիստերը կազմակերպվում են ոչ ուշ քան երկու տարին մեկ անգամ:

ե) Հանձնաժողովի նիստերի որոշումները ձևակերպվում են արձանագրությամբ:

Արձանագրությունը կազմվում է հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Արձանագրությունը ստորագրում են Հանձնաժողովի համանախագահները կամ, նրանց բացակայության դեպքում, փոխնախագահները: Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում արձանագրության ստորագրման օրվանից, եթե այլ բան նախատեսված չէ տվյալ արձանագրությամբ:

3. ԳՏ Ծրագրի շրջանակներում իրականացվող նախագծերի ընտրությունը կատարվում է մրցութային կարգով: Հայաստանի Հանրապետությունում և Ուկրաինայում միաժամանակ հայտարարվում է նախագծերի ֆինանսավորման համար մրցույթ:

4. Հայտարարվող մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի բոլոր գիտական հիմնարկների և բարձրագույն գիտական հաստատությունների գիտնականները, այլ հետազոտողները և նրանց խմբերը: Մյուս Պայմանավորվող կողմը ներկայացնող գործընկերոջ առկայությունը պարտադիր պայման է:

5. ԳՏ Ծրագրի շրջանակներում կարող են ֆինանսավորվել գործունեության հետևյալ տեսակները.

ա) նախագծում մասնակցող գիտնականների և այլ հետազոտողների Հայաստանի Հանրապետություն կամ Ուկրաինա այցերի ծախսերը,

բ) համատեղ սեմինարների, գիտաժողովների և հանդիպումների կազմակերպումը Հայաստանի Հանրապետությունում կամ Ուկրաինայում,

գ) համատեղ հոդվածների (իրապարակումների), համատեղ գործունեության նյութերի պատրաստման և իրապարակման ծախսերը,

դ) Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի պետության իրավական ակտերի համաձայն կարող են ֆինանսավորվել գիտական հետազոտությունների հետ կապված գործունեության այլ ձևեր:

6. Գիտնականների փոխանակման ֆինանսավորման պայմանները.

ա) վճարվում են գիտնականների և այլ հետազոտողների կարճաժամկետ ուղևորությունները (մեկ ամսից ոչ ավել տևողությամբ),

բ) ուղարկող կողմի ԳՏ Ծրագրի իրականացման հաստատությունը վճարում է.

- իրենց գիտնականների և այլ հետազոտողների ուղևորության ծախսերը դեպի ընդունող

Կողմի պետության այն վայրը, որտեղ գտնվում է նախագիծն իրականացնող գործընկեր-
կազմակերպությունը, առողջության ապահովագրության ծախսերը՝ յուրաքանչյուր
Պայմանավորվող կողմի պետության իրավական ակտերին համապատասխան.

- ընդունող Կողմի պետության տարածքում գտնվելու ծախսերը (կեցություն, օրապահիկ,
քաղաքային տրանսպորտ),

• Հայաստանի Հանրապետությունը Ուկրաինա ուղևորվող գիտնականին և այլ
հետազոտողին տրամադրում է միջոցներ օրապահիկի և կեցության ծախսերը հոգալու համար,

• Ուկրաինան Հայաստանի Հանրապետություն ուղևորվող գիտնականին և այլ
հետազոտողին տրամադրում է միջոցներ օրապահիկի և կեցության ծախսերը հոգալու համար,

գ) Ընդունող կողմն իր վրա է վերցնում նախագծում նախատեսված համատեղ
սեմինարների, գիտաժողովների, հանդիպումների անցկացման և ժամանած գիտնականների ու
այլ հետազոտողների իր կողմի պետության տարածքում ուղևորությունների կազմակերպման
ծախսերը:

7. Հայաստանի Հանրապետության գիտնականները և այլ հետազոտողները նախագծերը
ներկայացնում են Կոմիտե՝ հայերենով, իսկ Ուկրաինայի գիտնականները և այլ հետազոտողները
նախագծերը ներկայացնում են Գործակալություն՝ ուկրաիներենով:

8. ԳՏ Ծրագիրն իրականացնող հաստատությունները նախատեսված ժամկետում
ստացված նախագծերը փոխանցում են փորձագետներին՝ գնահատման համար:

9. Ներկայացված նախագծերի գնահատման համար փորձագետները կիրառում են
հետևյալ գնահատման չափանիշները.

- ա) նախագծի գիտական որակը և նորարարական բնույթը,
- բ) նախագիծն իրականացնելու համար գիտական ժամանակավոր խմբերի մասնագիտական
որակավորումը և ունակությունները,
- գ) նախագծում մասնակցող հաստատությունների ենթակառուցվածքի որակը,
- դ) նախագծում երիտասարդ հետազոտողների և դոկտորանտների մասնակցությունը,
- ե) նախագծի արդյունքների գործնական կիրառելիությունը,
- զ) պահանջվող ֆինանսավորման հիմնավորվածությունը:

10. ԳՏ Ծրագիրն իրականացնող հաստատությունները փորձաքննության արդյունքները
ներկայացնում են Հանձնաժողովին, որը համառոտ նիստի ժամանակ հաստատում է
ֆինանսավորվող նախագծերի ընդհանուր ցանկը:

11. ԳՏ Ծրագիրն իրականացնող հաստատությունները սեփական հնարավորությունների սահմաններում, իրավահավասարության սկզբունքների հիման վրա, ԳՏ Ծրագրի իրականացման համար տրամադրում են միջոցներ:

12. Նախագծերի կատարման տևողությունը չի գերազանցում երկու տարին:

13. Ֆինանսական միջոցների հատկացումն իրականացվում է առաջին տարում: Նախագծի իրականացման առաջին տարվա ավարտին նախագծի համակարգողները ԳՏ Ծրագիրն իրականացնող իրենց կողմի հաստատություն են ներկայացնում նախագծի կատարման ընթացքի տարեկան հաշվետվությունը: Տարեկան հաշվետվության գնահատումից հետո ԳՏ Ծրագիրն իրականացնող հաստատություններից յուրաքանչյուրը ներկայացնում է եզրակացություններ իր Կողմի Հանձնաժողովին, որն էլ ընդունում է համապատասխան որոշում ԳՏ նախագծերը երկրորդ տարում ֆինանսավորելու մասին: Նախագծի (նախագծերի) ֆինանսավորումը երկարացնելու, դադարեցնելու (անհրաժեշտության դեպքում) մասին Հանձնաժողովի ընդհանուր որոշումը կարող է համաձայնեցվել Հանձնաժողովի համանախագահներով գրավոր ձևով, որից հետո այդ որոշումը պետք է ներառվի Հանձնաժողովի նիստի հերթական արձանագրության մեջ:

14. Նախագծի մասնակիցները կնքում են համատեղ նախագծի իրականացման պայմանագիր, որը ներառում է.

ա) համատեղ հետազոտությունների իրականացման նպատակահարմարության հիմնավորումը,

բ) յուրաքանչյուր գործընկերոջ կողմից ծրագրով իրականացվելիք փուլերը,

գ) նախատեսվող ֆինանսավորման ծավալը և աղբյուրները,

դ) նախագծի իրականացման ժամանակ ստեղծված մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, որը չի հակասում Պայմանավորվող կողմերի պետությունների տարածքում գործող և մտավոր սեփականության պաշտպանության հարցերը կարգավորող իրավական ակտերին:

15. Նախագծի ավարտից հետո վերջինիս համակարգողն իր Կողմի պետության ԳՏ Ծրագիրն իրականացնող հաստատություն է ներկայացնում վերջնական հաշվետվություն, որում հստակեցնում է իրականացված նախագծի արդյունքները, այդ արդյունքների և հետագա համագործակցության օգտագործման հնարավոր ուղղությունները և հեռանկարները:

16. ԳՏ Ծրագիրն իրականացնող հաստատությունները պատրաստում են նախագծերի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն, նախագծերի արդյունքների հետագա օգտագործման առաջարկներ և այդ տեղեկատվությունը ներկայացնում են Հանձնաժողովի

քննարկմանը:

17. Պայմանավորվող կողմերն անմիջապես տեղյակ են պահում միմյանց ֆինանսավորման պայմանները կարգավորող իրավական ակտերի մեջ կատարված փոփոխությունների հետևանքով առաջացած ֆինանսական պայմանների փոփոխության մասին:

18. ԳՏ Ծրագիրը կնքվում է հինգ (5) տարի ժամկետով, երկու օրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Տեքստերի մեկնաբանման ժամանակ ծագած ցանկացած տարաձայնության դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

ԳՏ Ծրագրի գործողության ժամկետն ինքնաբերաբար երկարացվում է հաջորդ 3 տարի ժամանակահատվածի համար, եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը ոչ ուշ քան 6 ամիս առաջ՝ մինչև Ծրագրի գործողության ժամկետի ավարտը, գրավոր ձևով դիվանագիտական ուղիներով մյուս Պայմանավորվող կողմին չի ծանուցում Ծրագրի գործողության ավարտի իր ցանկության մասին:

ԳՏ Ծրագրում փոփոխությունները, դրա կասեցումը կամ գործողության ժամկետի ավարտը չեն ազդում ԳՏ Ծրագրի ուժի մեջ մտնելուց հետո իրականացվող համատեղ նախագծերի կամ այլ համաձայնությունների իրականացման վրա, եթե Պայմանավորվող կողմերն այլ համաձայնության չեն եկել:

Ծրագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի ստորագրման պահից:

Կատարված է ք. Երևանում, 2013 թ. նոյեմբերի 1-ին:

Հայաստանի Հանրապետության կրթության
և գիտության նախարարության
գիտության պետական կոմիտեի կողմից

Ուկրաինայի գիտության, երասրարության և
ինֆորմատիզացիայի հարցերով
պետական գործակալության կողմից

Ս.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նախագահ

Բ.Վ. ԳՐԻՆԵՎ

Նախագահի առաջին տեղակալ